

**ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ**

ԱՆԴՐԻԵԼԻԱՆ - ՀԻՐԱԽԱՆ

Անքիլիաս, 21 Գեկտեմբեր 1981

**Ամենապատիւ**

**Տ. Եղիշէ Արքապս. Տէրտէւան**

**Պատրիարք Հայոց Եռուսաղէմի**

**Եռուսաղէմ**

Սիրեցեալ Եղբայր ի Քրիստո,

Ահաւասիկ իր աւարտին կը հասնի 1981 տարին եւ մօս օրէն պիտի բացուի արաւոյսը 1982ին:

Ի՞նչ խորին խորհուրդ է որ ժամանակային այս փոփոխութեան, նոր մակդիրով նորուած տարուան առաջին օրերը կը լուսաբացուին մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի լուսածնունդ մարդեղութեան խորհուրդով, որ իննինին հոգեկան վերածննդեան, վերանորոգման ձգտումն ու կամքը կը ծնցնէ բոլոր Քրիստոնեաներուն մէջ եւ յատկապէս մեր հայ ազգի զաւակներու արտերուն եւ նորիներուն մէջ:

Դարձնալ խոռվ է աշխարհը, մանաւանդ Միջին Արևելքի ըջազգին մէջ: Այսօր, խաղաղութեան կարիքը աւելի շեւուած հանգամանք մը ունի հան որեւէ ատեն: Մեր ժողովուրդն ալ, աշխարհի չորս ծագերուն վրայ, անմասն չէ աշխարհի այս խոռվութեան ալիքներէն:

Եկէ՛ միացեալ ձեռքերով եւ եղբայրական սիրոյ կապով իրար զօդուած արտերագ, որպէս մէկ հոգի եւ մէկ սիր՝ ծունկի զանք մեր նորիներուն մէջ եւ երկրպագելով՝ խաղաղութեան մանկացեալ իշխանէն հայցնենք սէր, միութիւն, եղբայրութիւն՝ ի խաղաղութեան:

Ահա այս հոգեկան ջերմ տրամադրութեամբ կ'առաքենք Զեզի Մեր Եղբայրական սիրոյ եւ ընորհաւորանքի խօսքը Ամանորի եւ Ս. Ծննդեան տօնին առիթով: Մրտանց կ'ազօթենք որ ծնեալ Փրկիչն մեր՝ ընորհի Զեր Եղբայրութեան հաջառողութիւն՝ բազում տարիներով՝ տարունակելու եւ յարանուն պաղաբերութեամբ ծաղկեցնելու Զեր պատրիարքական իշխանութիւնը ի վայելումն հայ հաւատացեալ ժողովրդեան: Թող մարդացեալն Աստուած Զեզի եւ Մրոց Յակոբեանց Միաբանութեան եւ հաւատացեալ ժողովրդին պարզեն խաղաղութեան եւ բարգաւաճութեան նոր ըջան մը:

**Մնամք Եղբայրական սիրով**

**Աղօթակից**

**Գ.Ա.ՐԵԳԻՒՆ Բ.**

**Աքոռակից Կաքողիկոս**

**ԽՈՐԷՆ Ա.**

**Կաքողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ**



Վատիկան, 2 Յունիուս 1982

**Ն. Ամեն. Տ. Եղիշէ Պատրիարք Տէրտէռեան  
Հայ-Օքոսոս Պատրիարքարան — Երուսաղէմ**

Նորհակալութիւն՝ Զերդ Ամենապատուութեան բարեմաղբութիւններուն համար: Կ'աղօրենք որ Տէրը լիացնէ Զեզ իր երջանկութեամբն ու խաղաղութեամբը նորածագ տարւոյ բոլոր օրերուն ընթացէին:

ՅՈՎՀԱՆՆԻՍ-ՊՈՂՈՍ Բ. ՊԱՊ



**Նորին Ամենապատուութիւն  
Եղիշէ Սրբազն  
Պատրիարք Երուսաղէմի Հայոց**

Զերդ Սրբութիւն, սիրելի Սրբազն Քահանայապետ Տիրոջմով,

Մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի Մննդեան հրաշափառ տօնին առիթով, հոգեկան խոր ուրախութեամբ եւ սրտանց կը ջնորհաւորենք Զեզ:

Այժմ, երբ ամբողջ քրիստոնեայ աշխարհը կը փառաքանչ Մարտնացեալ Աստուածոդիին Ծննդով, մեր սրտերը կը լցուին խաղաղութեամբ եւ երախտազիտութեամբ, որը մեզ տրուեցաւ հրեշտակներու բերնով Սուրբ Մննդեան զիշերին:

Բաժնելով Զեզ հետ այս մեծ Խորհուրդի ուրախութիւնը, կը մաղթենք Զեզ Տիրոջմէն առաստ ջնորհներ:

Թող գալիք դարաշրջանին աստուածային բարեգթութիւնը անխախտ մնայ համայն մարդկութեան համար:

Քրիստոսի սիրով Զեր Եղբայրը՝

Պ Ի Մ Է Ն

Պատրիարք Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ

Քրիստոսի Մննդեան 1981/82 թ.

Մոսկուա

LAMBETH PALACE, LONDON, SE1 7JU  
CHRISTMAS 1981

His Beatitude Yeghishe Derderian,  
Armenian Patriarch of Jerusalem.

Your Beatitude,

*«And His name shall be called Wonderful, Counsellor,  
the mighty God, the everlasting Father, the Prince of Peace»  
(Isaiah 9:6)*

The Prophet Isaiah looks forward to the birth of the Prince of Peace who is given to us at Christmas and whose birth we now celebrate again.

The Angels' *Gloria in Excelsis* also emphasises the relation between the birth of Christ and peace. It extends the promise of peace to all mankind: «and in earth peace to men of good will».

But though peace is God's gift to man through the birth of Christ, it has to be accepted actively. «Blessed are the peace-makers», Jesus proclaimed in his preaching ministry, «for they shall be called the children of God». Peace must be worked for to be achieved.

Some initiatives for peace will be taken during the coming year, and I gladly associate myself with them. I pray that what is sown in hope may bear much fruit. To this end, however, the Christian Churches will have to speak together in a way which transcends their individual traditions of ideology and culture.

It is my hope that they will do so, and in this hope I greet you, Your Beatitude, in the love and joy of the Prince of Peace.

Your affectionate Brother in Christ,

DR. ROBERT RUNCIE  
Archbishop of Canterbury  
Primate of All England and Metropolitan

ՀԱՅԿԱՆԻԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻԱԽԹԻՒՆ

Դեկտեմբեր 10, 1981

Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքեպաս. Տէրտէրեան  
Պատրիարք Հայոց — Երուսաղէմ

Ամենապատիւ Տէր,

Զեր իմաստուն ու հոգեցունչ առաջնորդութեամբ Զեր Սուրբ Աթոռն ու նույր-  
եալ Միարանութիւնը բարօր ու բեղուն տարի Մը եւս կը բոլորն՝ Երուսաղէմի պատ-  
մական մինույրութիւն մէջ:

Անցնող տարին նշանակալից հանգրուան մը հանդիսացաւ նաեւ Բարեգործակա-  
նին համար, որովհետեւ այս շրջանին ան հանդիսաւորապէս տօնեց իր Ազամանզեայ  
Յորելեանը բովանդակ Սփիւռքի տարածքին: Այս առիթով մեզի համար հոգեկան ճըշ-  
մարիտ մխիթարութիւն եղաւ ստանալ Զեր սրտարուխ օրնութիւնն ու բարի ցանկու-  
թիւնները:

Մեր անկեղծ ու սրտագին բաղծանքն է որ բացօւող Նոր Տարին առողջութիւն,  
բարօրութիւն և երջանկութիւն պարզեւէ Զեզի եւ Զեր ուխտեալ Միարանութեան:

Զերմագին ցանկութիւններով ու սրտագին յարգանոր՝

Ա. ՄԱՅՈՒԿԵԱՆ  
Նախագահ



Լիզոն, 29 Դեկտեմբեր 1981

Ամեն. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Առաք. Ս. Աթոռոյն

Երուսաղէմ

Շնորհակալութիւն Ձեր սրտագին շնորհաւորութիւններուն եւ բարեմաղթութիւններուն համար զորս կը փոխադարձեմ յարգանքով:

**ԱԶԵՐԷՏԾ ՓԷՐՏԻԿԱԾ  
Նախագահ Կիւլպէնկեան Հիմնարկութեան**



Պոմպէյ, 28 Դեկտեմբեր 1981

Ամեն. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Առաք. Ս. Աթոռոյն

Երուսաղէմ

Պոմպէյի Հայ Եկեղեցւոյ Խորհուրդը եւ հայ համայնքը կը յղեն Ձերդ Ամենապատութեան իրենց սիրալիք եւ սրտագին շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները՝ նոր Տարւոյ եւ Սուրբ Մննդեան բարերաստիկ առիթներով:

**ՀՈԴԱԲԱՄՑՈՒԹԻՒՆ**



Ս. Վարդաննց տօնին առթ իւ, որ անուան տօնն է Վեհափառ Հայրապետին,  
Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հետևեալ հեռագիրը յղեց նորին Ս. Օծութեան. —

Երուսաղէմ, 22 Փետրուար 1982

Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Կաթողիկոս

Ս. Էջմիածին

Ձերդ Ս. Օծութեան անուան բարերաստիկ տօնին առիթով, կը ներկայացնենք Ձեզ մեր եւ մեր Միարանութեան սրտագին շնորհաւորութիւնները, մաղթելով Ձեզ երարիսնիկ տարիներ, իսկ Մայր Աթոռին՝ անսասանութիւն եւ բարգաւաճում:

**ԵՂԻՇ ՊԱՏՐԻԱՐՔ**